«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության
ազգային կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան Ֆանարջյան 76շ.

04/09/2020թ.
ժամը 11[00]

թիվ՝6

Արձանագրություն
«ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/81» ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

գնահատող հանձնաժողովի նախագահ
/տնօրենի տեղակալ ֆինանսատնտեսական գծով/ Գ. Բոշյան
հանձնաժողովի անդամներ
/տնտեսական ծառայության պետ/ Կ. Չաղարյան
/տնտ. ծառայության գծով խորհրդական/ Տ. Բեգոյան
/պահեստապետ/ Ս.Մաքսապետյան
/հաշվապահ/ Ա. Գևորգյան
հանձնաժողովի քարտուղար՝
Արմինե Համբարձումյան

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված

Հայտերի բացման մասին

Հանձնաժողովի նախագահ՝ Գարիկ Բոշյան

1. Ընդունել ի գիտություն որ՝

1.1 Գարեգին Հակոբյան Կարապետի ԱՁ-ն, «Բարսիս» ԱՊԸ-ն, «Ֆոտոն» ՍՊԸ-ն, Կարեն Հովհաննիսյան Սարգսի ԱՁ-ն և Ա/Ձ Արմեն Հասանյանն իրենց կողմից ներկայացրած հայտում արձանագրված հրավերի նկատմամբ անհամապատասխանությունները շտկել են:

1.2. «Գլոբալ-Շին» ՍՊԸ-ն 144, 145, 146, 147, 148, 149, 150 և 151-րդ չափաբաժինների մասով , «Էֆեկտ Գրուպ» ՍՊԸ-ն 2-րդ չափաբաժնի մասով, «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ն 158-րդ չափաբաժնի մասով, «Դրինք Հաուս» ՍՊԸ-ն 103 և 143-րդ չափաբաժինների մասով իրենց կողմից ներկայացրած հայտում արձանագրված հրավերի նկատմամբ անհամապատասխանությունները չեն շտկել , ուստի նշված մասնակիցների հատը համապատասխան չափաբաժինների մասով մերժվում է:

Ընդունել որոշում ***կողմ 5 (հինգ), դեմ 0 (զրո)*** ձայներով

2. Բանակցությունների մասին

2.1 Գնահատող հանձնաժողովը Ղեկավարվելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներով, որոշեց՝ կասեցնել հայտերի բացման նիստը ու առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների, քանի որ գնման ընթացակարգը իրականացվում է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Բանակցությունները վարվելու են «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ, ք. Երևան, Ֆանարջյան 76շ. հասցեով :

Բանակցությունների վարման սկիզբն է՝ բանակցությունների վարման մասին ծանուցումը մասնակիցներին ուղարկելու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրվա(08.09.2020թ.) ժամը 10:00-ն, իսկ բանակցությունների վարման վերջնաժամկետն է՝ նույն օրվա ժամը 12:00-ն:

Ընդունել որոշում ***կողմ 5 (հինգ), դեմ 0 (զրո)*** ձայներով

գնահատող հանձնաժողովի նախագահ
/տնօրենի տեղակալ ֆինանսատնտեսական գծով/ Գ. Բոշյան

հանձնաժողովի անդամներ
/տնտեսական ծառայության պետ/ Կ. Չաղարյան

/տնտ. ծառայության գծով խորհրդական/ Տ. Բեգոյան

/պահեստապետ/ Ս.Մաքսապետյան

/հաշվապահ/ Ա. Գևորգյան

հանձնաժողովի քարտուղար՝
Արմինե Համբարձումյան